



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2(059)

0-83

1888

5414

5415

**ՏՕՄԱՐԱԿԱՆ**

**ՀԱՄԱՌՈՑ ԳԻՏԵԼԻՔ**

**ԻՄՔԱԳԻՇՑ**

**ՍԱՐԳԻՍ ԳՆՈՒՆԻ**

**1888**

**Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ:**

**Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԻՍՏՆԻ:**

116000-տի

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՍՐԲԱԶԵԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.



1429-2009

# ՏՕՄԱՐԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԳԻՏԵԼԻՔ

Ա.

1. Տօմարագիտութիւնն է ժամանակի պէտպէս փոփոխուածեան գիտութիւն, որ հիմնուած է Արեդական եւ Լուսնի ընթացքի վերայ:

2. Հին ազգերը, — Հայք, Բաբելացիք, Եգիպտացիք, Պարսիկք, Յայնք, Հռովմայեցիք, Հրէայք եւ այլք իրարուց տարբեր եղանակաւ ընդունած ու գործադրած են ժամանակի շրջանն, իսկ մենք բոլորի վերայ առանձին գրեւն զանց աւնելով, միայն Հրէից եւ Հռովմայեցւոց ընդունած շրջանների վերայ մի համառօտ ահնարի ձգելով կը դառնաւք մեր բուն նպատակին:

3. Ս. Գրքից յայտնի է, որ Մովսէս Քրիստոսից 1487 տարի յառաջ օրինադրեց Հրէից՝ Եգիպտոսից ելնելու ազատութեան յիշատակի տօնը կատարել ամէն տարի՝ լուսնական առաջին ամսոյ (Նիսան) 14-ին, սյն է դարնան գիշերահաւասարից յետոյ Լուսնի առաջին լրման օրն, որ ասվումէ աւագ Լըրումն, (Սյս կրօնական անդրանիկ տօնը կոչվումէ Պատեք — զհնումն գաւին, — քրիստոնէից՝ Չատիկ Տեառն)։ Նաեւ Պատեքից յիսուն օր յետոյ՝ տօն կատարել ի յիշատակ Սինայ լեռան վերայ տասնաքանեայ օրէնք եւ պատուիրանք ստանալուն, (Սյս երկրորդ տօնը կոչվումէ Պեհաեփուստէ - յիսներորդ օր Պատեքի, — քրիստոնէից՝ Հոգեգալուստ), միւս տօներն կախումն ունին այս երկու մեծ տօներից։

4. Հրէից տարին լուսնական է.

նման մահմետականաց՝ 354 օր<sup>\*</sup>), երկու կամ երեք տարին մի անգամ նահանջ՝ 384 օր, սյն է 13 լուսնական ամիս, աւելացնելով վէ Ադար ամիսն, (կրկնելով Ադար ամիսն), 19 տարուայ ընթացքում ընդունելով 7 նահանջ եւ 12 հասարակ տարի։

5. Հրէից նահանջ տարին գըտնելու համար պէտք է նոցա թուականն 19 ով բաժանել, աւելացածն եթէ 1, 2, 4, 5, 7, 9, 10, 12, 13, 15, 16, 18 է, հասարակ տարի է 12 լուսնական ամսով, եթէ 3, 6, 8, 11, 14, 17, 19 է, նահանջ է 13 լուսնական ամսով, Օրինակ 5649, 19 = 297, աւելացածն է 6, ուրեմն է նահանջ։

6. Հրէից քաղաքական տարին սկսվումէ աշնան գիշերահաւասարից — Թշրի ամսից, իսկ եկեղեցա-

(\*) 6 ամիսը 50 օր, 6 ամիսը 29 օր։

կանն՝ գարնան գեշերահաւասարից,  
— Նիսան ամսից:

7. Հրէից Թուականը սկսվում է  
աշխարհի ստեղծմանից, որ այժմ  
(1838 թուին) է 5649 ըստ հաշուի  
իւրեանց:

Բ.

8. Հռովմայեցւոց ասորական  
շրջանն սկսած է Հուսի հիմնադիր  
Հռոմուլոս Ա. թագաւորի ձեռքը,  
Քրիստոսից 749 տարի յառաջ, ըն-  
դունելով տարին տասն անհաւասար  
ամիսներ<sup>\*</sup>): Յետոյ Հռոմուլոսի յա-  
ջուրդ Նումա Պոմպիլիոս աւելացրեց

(\*) Ամիսների անուանքն էին Մարտ,  
Ապրիլ, Մայիս, Յունիս, (յառուն հաստուծոց)  
Չուենդիլիս (հինգերորդ), Սեպտիլիս (վեցե-  
րորդ), Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր,  
և Դեկտեմբեր:

երկու ամիսներ (Յունվար եւ Փե-  
տրվար). սահմանելով լուսնական  
տարին 355 օր, եւ տարեգլուխն  
Յունվար ամսոյ սկիզբն<sup>\*</sup>):

9. Յետոյ Յուլիոս կայսր 46 տարի  
Քրիստոսից յառաջ՝ Աղէքսանդրիոյ  
Սոսիլինոս երեւելի հմուտ աստղա-  
բաշխի խորհրդով վերջնականապէս  
ուղղեց ասմարն՝ ընդունելով արե-  
գականային տարին 365 օր եւ 6 ժամ,  
եւ սահմանեց չորս տարին մի ան-  
գամ այս 6 ժամերն մի օր կազմել,  
եւ աւելացնել զայն Փետրվար

(\*) Յունվարի առաջին օրը կոչվում է  
Կադանդ, որ ծագել է Լատիներէն Կալո բա-  
ռից, որ նշանակում է մեծածայն դոչել. որով-  
հետեւ Հռովմայեցւոց մէջ սովորութիւն էր  
որ քրմապետի մի պաշտօնեայ հսկում էր  
լուսնոյ ծննդեան, եւ երբ տեսնուէր, բարձրա-  
ձայն յայտնուէր զոհորար քրմին, հրախրել  
ժողովրդին հաւարուել եւ զոհ մատուցանել  
ամէն ամսամտին, զոր կոչէին Կադանդ:

ամսոյ վերայ. եւ այն տարին համարել նահանջ՝ 366 օր:

10. Յունվար, Մարտ, Յուլիս<sup>\*)</sup>, Օգոստոս, Հոկտեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներն 31 օր են. Սպրեւ, Յունիս, Սեպտեմբեր, եւ Նոյեմբեր ամիսներն 30 օր, իսկ ֓ետեմբարն 28 օր (նահանջ տարին 29 օր): Այս կարգադրուածիւն կոչուեցաւ Յուլիան տօմար:

Գ.

11. Յուլիան տօմարն ընդունելով տարին 365 օր 6 ժամ. իւր մէջ աւելի էր պարունակում 11 րո-

(\*) Հռովմի ծերակայոց Մարկոս Անտոնինոս Հիւղատոսի ժամանակ ի պատիւ Յուլիոսի՝ Գուէնտիլիս ամիսն, որոյ մէջ ծնել էլ Յուլիոս, անուանեց Յուլիս եւ Սեպտիլիս ամիսն, ի պատիւ Օգոստոս կայսեր, անուանեց Օգոստոս:

պէ եւ 15 վայրկեան. Այս 11 րոպէները եւ 11 վայրկեաններն մի քանի դարերի ընթացքում կազմում էին ամբողջ օրեր. եւ մինչ 1582 թ. Փրկչի՝ 10 օր դառնալով՝ տօմարը 10 օր յետ էր մնացել, (այժմ 12 օր) կամ որ նոյն է, երկրի ընթացքը 10 օր յառաջ էր անցել ըստ սուղիչ հաշույ հմուտ աստղաբաշխից:

12. Հռոմայ պապ Գրեգոր ԺԳ. 1581 թուին՝ Հռովմի մէջ ժողով կազմեց հմուտ աստղաբաշխերից, ընդունելով կոպերնիկոս աստղաբաշխի հաշիւն, այն է ընդունել տարին 365 օր 5 ժամ 48 ր 49<sup>\*)</sup> վայրկեան լինելն ոչ թէ 365 օր եւ 6 ժամ. սահմանեց յաջորդ տարւոյ Հոկտեմ-

(\*) Ռմանք տարբեր են ընդունում այս երկրորդական վայրկեան, զոր օրինակ 49—50, բայց այս փոքրվածազանութիւնը 5500 տարիների ընթացքում հազիւ մի օր է կազմում:

բեր 4-ից յետոյ երկրորդ օրն համարել 15 Հոկտեմբեր. 10 օրերն բաց թողնելով: Այս կարգադրութիւն ասվումէ Գրիգորեան տօմար, զոր ընդունած են արեւմտեան եկեղեցիք: Իսկ արեւելեան եկեղեցիք ապակաւին Յուլիան տօմարով են վարվում:

13. Որովհետեւ ըստ Յուլիան տօմարի 11 րոպէ 15 վայրկեան աւելի հաշուելով 100 տարուան մէջ գրեթէ 18 ժամ 36 վայրկեան, 400 տարուան մէջ 3 օր 2 ժամ 26 րոպէ 40 վայրկեան էին կազմում, Գրիգոր Ժ.Գ. պապը սահմանեց բացի չորս տարին մի անգամ նահանջ համարելուց, երեք դարագլխից յետոյ չորրորդ դարագլուխն համարել նահանջ, այսինքն 1700, 1800 եւ 1900 թուականն հասարակ, իսկ 2000 թուականն նահանջ, ապագայի մէջ սխալմանց առաջն առնելու համար:

14. Յուլիան տարին ասվումէ արեգակնային քաղաքական տարի, իսկ Գրիգորեան տարին՝ բնական տարի, որ ցոյց է առելս երկրի՝ արեգական շուրջը մի անգամ ողոյտ դալը, այն է ինչ կէտից որ սկսել է, կրկիննայն կէտը հասնելը. զոր օրինակ եթէ Խոյ կենդանակերպի առաջին կէտից է սկսել իւր ընթացքը, 12 կենդանակերպերում մի մի ամիս շարունակելով դարձեալ հասնումէ մի եւնոյն Խոյի առաջին կէտին:

Դ.

15. Կսյ նաեւ լուսնական տարի, զոր գործ են անում մահմետականք, որ երեք տեսակ է. քաղաքական, բնական եւ վերագրով:

16. Քաղաքականն է միայն 12 լուսնական ամիս՝ առանց ժամերի, ուղիղ 354 օր. բնականն՝ 354 օր,



8 ժամ, 48 բոսէ 36 վայրկեան՝ մի  
լուսնական շրջանը համարելով 29  
օր, 12 ժամ, 44 բոսէ, 3 վայր-  
կեան, իսկ վերադարձին՝ երեք տա-  
րին մի անգամ 13 լուսնական ա-  
միս, այն է 384 օր:

ե.

ԹՈՒԱԿԱՆ ԵՒ ՏՕՄԱՐ ՀԱՅՈՑ.

17. Հայոց ազգային թուականն  
է այժմ (1888 թ.) 3995՝ Հայկեց  
սկսած, եկեղեցականն՝ 1855՝ սկսած  
ի հաւատալոյ Աբգարու եւ 1585՝  
սկսած Վռնաւորչեց, բայց այս թուա-  
կաններն այնչափ յաճախ չեն դոր-  
ծածվում, որովհետեւ Փրկչի ծննդ-  
դեան թուականի առաջ լռեցին  
բոլոր տարեգլուխներն եւ զանազան  
թուականներն:

18. Միայն տօմարակոն թուա-

կանն է դործ ածվում Փրկչի թուա-  
կանի հետ, որ եւ այժմ (1888) է  
1337 (ՌՅԼԷ), որ սկսած է Փրկչի  
551 թուին Մովսէս Բ. Եղուարդեցի  
կաթուղիկոսի տօմարի կարգադրու-  
թիւնից:

19. Հայոց տարին եւս արեգակ-  
նային էր առանց նահանջի՝ միայն  
365 օր, բաժանուած 12 հաւասար  
ամիսների 30-ական օր եւ մի ամիս  
եւս Աւելեաց անուհով՝ 5 օր:

20. Հայոց տօմարական տարե-  
գլուխն էր I-ն, աւասարդի, որ ամէն  
չորս տարին մի օր յետ մնալով  
միշտ շարժական էր. եւ 1460 տա-  
րուան մէջ յետ շարժելով կրկին  
իւր առաջին տեղն կը հասնէր եւ  
Յուլիան տարուց մի տարի կաւեւա-  
նար:

21. Երբ Փրկչի 551 թուին լրա-  
ցու բոլոր քրիստոնեայ ազգաց հա-  
մար սահմանուած երկուհարիւրա-

ժեայ դասակի շրջանը. զոր սահմանած էր Բիւզանդացի ոմն Անդրէաս աստղաբաշխ տօմարագէտն՝ դատկական Լուսնի Լրումն անսխալ գտնելու համար, որի առաջին տարին Զատիկ Լուսնի Լրումն Ապրելի 4-ին էր, վերջի 200-որդ տարին՝ 552 ին՝ Մարտի 25-ին եւ 553-ին կը հանդիպէր Ապրել 13-ին, փոխան Ապրել 4-ին, շեղվում էր եւ տակաւին 9 տարուց յետոյ պիտի պատահէր Ապրելի 4-ին, որով Տէրունական տօներն սկսեցին խառնուել, Ուստի Մովսէս Բ. Կաթողիկոս Եղուարդեցի ժողով կազմեց Գուհն քաղաքում՝ Տարօնցի տօմարագէտ Աթանոսի կարգած տօմարն ընդունել, զոր իւր հրամանով կարգած էր, միայն ինսամիայ սխալն ուղղելու համար (բայց չընդունելով նահանջ տարի, չկարաց ուղղել սխալն)։

22. Մովսէս Բ-ի կարգած Թուրկանից 10 ասորի յետոյ 562 թուին Աղէքսանդրացի հմուտ աստղաբաշխ էաս սահմանեց 532 տարուայ շրջան. որ կոչուեց հինգ-հարիւրեակ. որի աւարտելու ժամանակը դատկական Լուսնի Լրումն ուղիղ հաշուով՝ անսխալ կը դառնայ նոյն շրջանի ըսկիզբը մշտնջինաւորապէս։

23. Այս շրջանի սկիզբը Արեգակը (երկիր) եւ Լուսին մի կէտից իւրեանց ընթացքը սկսելու ժամանակ կարող չեն իմաստին շրջաններն աւարտել մինչեւ 532 շրջանի Լրումն, որովհետեւ Եթէնքեռակնիւրի կարգը Արեգակի 28 ամիսայ շրջանովն է նորոգվում, եւ Իննեւտօմերեակի կամ Վերադարաց կարգը Լուսնի 19 տարուայ շրջանովն, Եթէ Արեգակի 28 տարին Լուսնի շրջանի 19 անգամով բազմապատկուի դուժմարը կը լինի  $532 \cdot (28 \times 19 = 532)$ , Այս

հաշուով մի շրջանի տւարտելու  
ժամանակը զատկահան Վուսնի Լըումն  
ուղիղ հաշուով անսխալ կը դառնայ  
նոյն շրջանի սկիզբը մշտապէս. որով-  
հետեւ այս շրջանի սկզբի տարին  
Ապրիլի 4-ին էր տւագ Վուսնի Լը-  
ումն. իսկ վերջի տարուամբ 532-ին  
Մարտի 25-ին, կրկին յաջորդ տարին  
երկրորդ շրջանի սկիզբն՝ Ապրիլ  
4-ին:


24. Աբրահամ Ա. կաթողիկոս  
594 թուին անաորակուսելի եւ  
հաստատուն համարելով էտոի սահ-  
մանած այս շրջանը, ընդունեց ինչ-  
պէս բոլոր քրիստոնեայ ազգերը  
ընդունած էին:

25. Փրկչի 1116 թուին սարկա-  
ւազ մտկանուանեալ Յովհաննէս  
վարդապետ նկատելով Մովսէս Բ-ի  
սահմանած տամարի թերութիւնն,  
որ յուռաջ էր գալիս նահանջ տարի  
ընդունելուց, ընդունեց Յուլիան

տամարի համաձայն նահանջ տարի.  
այն է տարին 365 օր, 6 ժամ,  
եւ չորս տարին մի անգամ աւելա-  
ցած 6 ժամերն մի օր կազմել եւ  
յաւելացնել Աւելեաց ամսոյն վերայ.  
համարել 6 օր եւ Նաւասարդի 1-ը  
անշարժապէս Օգոստոս 11-ին, սըր-  
բոց ճառերն Յայսմաուուրքում մի եւ  
նոյն օրը կարդալու համար, Այս ե-  
կեղեցական տարին կոչվումէ Յայս-  
մառարաց տարի, որ աւելի ուղիղ է  
քան Մովսէս Բ-ին, եւ ցարդ ան-  
շարժ, Օգոստոսի 11-ին է Նաւա-  
սարդի 1-ը:

26. Հայոց իսկական թուականն  
է այժմ (1888) 4379՝ որ սկսած է  
Բաբելոնի աշտարակի կործանմանից  
յետոյ Հայկի Բեղից ապստամբելով  
Արարտեան աշխարհ մուտ գոր-  
ծելու օրից եւ տարեգրւելն է Նա-  
ւասարդի 1 (Օգոս. 11), որ ամենոր  
էւս է սովում, եւ մեր Արտաշէս Բ. եւ

1429-2009



Վարդարշ Թագաւորաց ժամանակ  
աշխարհախոժովն հանդիսով տօն-  
վումէր Բագրեւանդում։ Այս Թուա-  
կանն տաճկոհայոց Օրացոյցներն  
գործ են ածում այժմ։

27. Փրկչի 1616 Թուակառնին  
Նոր Զուղայեցի Ազարիա անուն  
ոմն սահմանեց Զուղայեցւոց նոր  
Թուական՝ տարեդրուխը դնելով  
Մարտ 21ին, Հայոց ամիսների անուն-  
ները միայն փոխելով։ Այս Թուա-  
կանը կոչվումէ փոքր Թուական Ա-  
զարիայի, որ այժմ՝ (1888 Թուին)  
է 273 (ՄՀԳ) եւ տակաւին 259  
տարի կայ մի շրջան լրոսնալու, եւ  
սկսելու իւր Բ. շրջանը։ Այս Թուա-  
կանը գործածում են Նոր Զուղայե-  
ցի եւ Հնդկաստանցի ազգայինք։

28. Ազարիայի Թուականը ոչինչ  
սոմարական հաշիւ չունի. միայն է-  
սսի 532 ամեայ Գ. շրջանի սկիզբն  
է եւ Հայաստանից Շահաբասի ձեռօք

գաղթելու յիշատակը։

29. Ի վերջոյ՝ Երեւանցի Սիմէօն  
կաթուղիկոս կարգադրեց տօնա-  
ցոյցն պարզ՝ սոմարական աղիւսա-  
կով, Հուովմայեցւոց Վերագիրն եւ  
Եօթնեքեակն գործածելով եւ ըստ  
Յուլիան սոմարին ընդունելով նա-  
հանջ տարի,

30. Սիմէօնի տօնացոյցով ան-  
ոխալ կատարվում են Հայաստանեայց  
եկեղեցւոյ բոլոր տօներն, երգեցո-  
ղութիւնք, ժամասացութիւնք, եւ  
ընթերցուածք՝ առանց սխալելու  
յաւիտեանս ժամանակաց։

31. Նահանջ տարին գտնելու  
համար հարկաւոր է փրկչական Թու-  
ականը 4. ով բաժանել, մնա-  
նացորդն եթէ I է նահանջից  
յետոյ առաջին տարին է, եթէ  
2 է, երկրորդ տարին է, եթէ  
3 է՝ երրորդ տարին է, եթէ ոչինչ  
չաւելանայ, նահանջ է։ Օւ նակ,

1888:4=472\*) ոչինչ չաւելացաւ,  
 ուրբմն նահանջ է:

32. Տօմարական թուականը գլտ-  
 նելու համար, պէտք է փրկչի թուա-  
 կանից հանել 551 թիւ, մնացորդն է  
 տօմարական թուականը, իսկ Ա. դար-  
 իայի թուականը գտնելու համար՝ տօ-  
 մարական թուականից հանել 1064,  
 մնացորդն է թուական Ա. դարիայի,  
 օրինակ. 1888—551=1337 է Տօմա-  
 րական թուականը, 1337—1064=  
 273 է Ա. դարիայի թուականը:

Ե.

Ա. Մ. Ս

33. Ամիսն երկու տեսակ է. Ա.  
 րեգական եւ Լուսնի:

(\*) Քանորն ցոյց է տալիս թէ քանի  
 ցահանջ տարի է պատահել ցարդ:

34. Արեգականային ամիսն է Ա-  
 րեգական մի կենդանակերպից միւսը  
 կատարած ընթացքն. որ ունի 30  
 օր, 10 ժամ 29 րոպէ 4 վայրկեան,  
 որ 12 կենդանակերպերում կատար-  
 ւելով իւր ընթացքն 365 օր 5 ժամ  
 48 րոպէ 45 վայրկեան միջոցում  
 կրկին դառնում է իւր տուաջին կէ-  
 տը, այս ժամանոր ամիսն ասվում է  
 աստղաբաշխական ամիս, իսկ տարին՝  
 աստղաբաշխական տարի:

35. Լուսնական ամիսը երկու  
 է բաժանվում աստղաբաշխական եւ  
 քաղաքական:

36. Աստղաբաշխականն է 29  
 օր, 12 ժամ, 44 ր. 3 վայրկեան,  
 իսկ քաղաքականն է փոփոխակի մի  
 ամիս 30 եւ մի ամիս 29 օր, առանց  
 հաշուելու րոպէներն:

2.

## ՇԱՐԱԹ ԿԱՄ ԵՕԹՆԵԱԿ.

37. Շաբաթ ասվումէ 7 օրեայ միջոցը, որոյ սկզբնաւորութիւնն է արարչութեան սկիզբը, առաջին օրն ասվումէ Միաշաբաթ (ի պատիւ յարութեան Տեառն՝ Կիւրակէ, որ է տէրունական), երկրորդ օրն՝ Երկուշաբաթի, երրորդ օրն՝ Երեքշաբաթի, չորրորդն՝ Չորեքշաբաթի, հինգերորդն՝ Հինգշաբաթի, վեցերորդն՝ Ուրբաթ (Ստորերէն կամ Արաբերէն ռուբաթ), եօթներորդ օրն՝ Շաբաթ, որ է հանգիստ (Եբրայեցերէն)։

է․

Օր՝

38. Օրն է երկրագնդի մի անգամ թաւալումն իւր առանցքի

վերայ, որով յառաջ է գալիս գիշեր եւ ցերեկ։

39. Մինչեւ 1543 թ. կարծւում էր թէ Արեգակն արեւելքից դառնում է արեւմուտք, Կոպերնիկոս աստղաբաշխ՝ հաստատ ապացոյցներով ցոյց տուեց որ երկրագունդը 24 ժամու մէջ իւր առանցքի վերայ է թաւալում, եւ երբ երեսը դէպի արեւն է դարձնում նոյն բնակչաց ցերեկ է, իսկ միւս մասն խաւար է մնում եւ իւր բնակչաց գիշեր։ Բացի Հասարակածից գիշերուան եւ ցերեկուան տեւողութիւնն անհավասար է ամէն տեղ, ըստ սյամ՝

|                |              |
|----------------|--------------|
| Լսցն. աստիճ 0° | 12 ժամ միշտ: |
| 8° — 34' —     | 12 1/2 ժամ:  |
| 16 — 43 —      | 13 ժամ:      |
| 24 — 10 —      | 13 1/2 ժամ:  |
| 30 — 46 —      | 14 ժամ:      |
| 36 — 28 —      | 14 1/2 ժամ:  |

|                |       |    |       |
|----------------|-------|----|-------|
| Լայն. աստիճ 0* |       |    |       |
| 41 —           | 20—   | 15 | ժամ:  |
| 48 —           | 59—   | 16 | ժամ:  |
| 54 —           | 28—   | 17 | ժամ:  |
| 58 —           | 25—   | 18 | ժամ:  |
| 61 —           | 16—   | 19 | ժամ:  |
| 63° —          | 20—   | 20 | ժամ:  |
| 64 —           | 48—   | 21 | ժամ:  |
| 65 —           | 46—   | 22 | ժամ:  |
| 66 —           | 20—   | 23 | ժամ:  |
| 66 —           | 32—   | 24 | ժամ:  |
| 67 —           | 23—   | 1  | ամիս: |
| 69 —           | 10—   | 2  | ամիս: |
| 73 —           | 39—   | 3  | ամիս: |
| 78 —           | 41—   | 4  | ամիս: |
| 84 —           | 5—    | 5  | ամիս: |
| 90             | բեւեռ | 6  | ամիս: |

40. Երբ հասարակածից դէպ ի  
Հիւսիս ցերեկներն աստիճանաբար  
երկարին, նոյն համեմատութեամբ  
հարաւային կողմն կըկարճանան եւ

գիշերները կերկարին, իսկ երբ հիւ-  
սիսային կողմն գիշերները երկարին՝  
հարաւային կողմը կըկարճանան եւ  
ցերեկներն կերկարին՝ վեց ամսից  
վեց ամիս:

41. Արեգակն մտնելուն կամ  
ծագելուն ժամերն կորոշուին միջօ-  
րէական կամ երկայնութեան աստի-  
ճանով, 15 աստիճան\*) իրարուց հե-  
ռու տեղերը մի ժամ յառաջ կամ  
յետոյ կը տեսնեն արեգակը, եւ ժա-  
մացոյցներն մի ժամ յետ կամ ա-  
ռաջ կը լինին իրարից, մի աստիճանն  
4 րոպէ տարբերութիւն ունի:

42. Գլխաւոր քաղաքը

|              |               |       |
|--------------|---------------|-------|
| Լայն. աստիճ. | երկայն. աստի. |       |
| Փարիզ        | 48—50.        | 20—0  |
| Լոնդոն       | 51—30.        | 17—33 |

(\*) երկայնութեան աստիճանը սկսած է  
երկաթի կղզուց որ Կանարեան կղզեաց խմբի  
մէջ է:

Լայն. աստիճ. երկայն աստիճ.

|           |        |        |
|-----------|--------|--------|
| Վ հննա    | 48-12. | 34- 2  |
| Բերլին    | 52-32. | 31- 6  |
| Ս. Պետեր  | 59-56. | 47-59  |
| Մոսկովայ  | 55-45. | 55-12  |
| Օդեսսայ   | 46-30. | 48-29  |
| Կ. Պօլես  | 41- 1. | 46-36  |
| Տփլիս     | 41-30. | 62-58  |
| Երեւան    | 40-15. | 62-30  |
| Վան       | 38-15. | 61-45  |
| Մուսուլ   | 36-35. | 60-48  |
| Բաղդատ    | 33-19. | 62- 2  |
| Երուսաղէմ | 31-46. | 52-30  |
| Թեհրան    | 35-40. | 69- 0  |
| Մէքքէ     | 21-25. | 58-20  |
| Կալկաթա   | 22-34. | 106- 0 |
| Մադրաս    | 13-14. | 97- 9  |
| Բոմբա     | 18-56. | 90-18  |
| Սինգափոր  | 1-20.  | 121-20 |
| Նանքին    | 32- 4. | 136-27 |
| Գահերէ    | 30- 2. | 4-58   |
| Նիւեորք   | 40-40. | 303-50 |
| Փեքին     | 39-54. | 134- 5 |

43. Օրուան 24 ժամերն զանազան կէտից են համարում ազգերը, Յոյնք եւ Ասորիք սկսում են արեւի ծագումից, Հայք եւ Հրեայք՝ արեւու մտնելուց, Աբաբացիք եւ եւ աստղաբաշխք՝ կէս օրից, իսկ Եգիպտացիք, Հռովմայցիք, Անգղիացիք, Գաղղիացիք, Գերմանացիք եւ այլք՝ կէս գիշերից:

44. Եւրոպացիք 24 ժամերն երկու են բաժանում, կէս գիշերից մինչեւ կէսօր 12 ժամերն կոչում են առաշոտեակ ժամք, իսկ կէսօրից մինչ կէսգիշեր 12 ժամերն երեկոյեակ ժամք:

Բ.

ԵՕԹՆԵՐԵԱԿ

4. Եթներեակ կամ կիրակագիրն է 28 ամեսայ շրջան Արեգական



46. Եօթներեակով գտնվում է Գիր տարւոյ, Զատիկ, Միջոց սևտիք, եւ Ամսամուտն:

47. Շաբաթուայ եօթն օրերի տեղ սահմանուած է դնել այս եօթն տառեր Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է:

48. Հասարակ տարին ունի 52 շաբաթ եւ մի օր. իսկ նահանջ տարին 52 շաբաթ, երկու օր: Այս աւելացած օրերն փոխուածն եօթներեակաց կարգը մինչեւ 28 տարի. եթէ մի տարի եօթներեակն է է. սր է կիւրակէ օր տարեմտի. այն է Յուլիանոս I. յաջորդ տարին կը լինի Ա. միւս տարին Բ:

49. Նահանջ տարին ունի երկու եօթներեակ. եթէ սկսած էր Գ. յաջորդ տարին փոխանակ Դ. ի կը լինի Ե. Եթէ նահանջ տարի չլինէր, եօթն տարին մի անգամ կը լրանար շրջանն: Է. եօթներեակն է կիւրակէ. Ա. Բ. Գ. Դ. եւ Է:

50. Քսան եւ ութ տարուայ ընթացքում եօթն եօթներեակ աւելի են գործածվում. ըստ որում 28 տարուայ մէջ եօթն նահանջ տարի կայ, երբ լրանումէ 28 տարին—35 եօթներեակ, կրկին անսխալ մի եւ նոյն կարգով կը շարունակուի:

51. ԱՂԻԻՍԱԿ ԵՕԹՆԵՐԵԱԿԱՑ:

|         |          |          |         |          |          |          |
|---------|----------|----------|---------|----------|----------|----------|
| 1<br>Ա  | 2<br>Բ   | 3<br>Գ   | 4<br>ԴԵ | 5<br>Զ   | 6<br>Է   | 7<br>Ա   |
| 8<br>ԲԳ | 9<br>Դ   | 10<br>Ե  | 11<br>Զ | 12<br>ԷԱ | 13<br>Բ  | 14<br>Գ  |
| 15<br>Դ | 16<br>ԵԶ | 17<br>Է  | 18<br>Ա | 19<br>Բ  | 20<br>ԳԴ | 21<br>Ե  |
| 22<br>Զ | 23<br>Է  | 24<br>ԱԲ | 25<br>Գ | 26<br>Դ  | 27<br>Ե  | 28<br>ԶԷ |

52. Եօթներեակը գտնուու համար նախ հարկ է գիտենալ թէ նախորդ տարուանը հրն էր, նորա յաջորդ տառն է ներկայ տարուան. զոր օրինակ, եթէ անցեալ տարուանն էր Ա. այս տարուանը կը լինի Բ. եւ

այլն ըստ կարգին.

53. Հանել տօմարական թուականից 5 թիւ, ապա հանել 1064, յետոյ մնացորդն բաժանել 28-ով, վերջին աւելացածն գտնել (51) աղիւսակի մէջ՝ որոյ հանդէպն է Եօթներեակ, օրինակ 1337-5=1332-1064=268, 28=9, մնացորդն է 16, որոյ հանդէպն է ԵԶ. Եօթներեակ նահանջ տարւոյն (51):

54. Փրկչական թուականի վերայ աւելացնել 4, դումարիցն հանել 1876, մնացորդն բաժանել 28 ով, վերջին մնացորդի հանդէպ (51) աղիւսակի մէջ է Եօթներեակ ԵԶ:

Օրինակ. 1888+4=1892-1876=16 որի հանդէպն է ԵԶ. (51):

55. Երբ Եօթներեակը զոյգ լինի, այն տարին նահանջ է, առաջինը կը գործածուի մինչ ցվե ըջ փետրվարի, իսկ երկրորդը, Մարտի 1-ից ցվերջ տարւոյն:

56. 4 հարիւր ամեսց Աղիւսակ Եօթներեակաց ըստ Յուլիան տօմարին.

| Թուական | Հարիւր | ամս | ընդ. | 1800 | 1900 | 2000 | 2100 |
|---------|--------|-----|------|------|------|------|------|
| 0       | 28     | 56  | 84   | ԷԱ   | ԶԵ   | ԵԶ   | ԳԵ   |
| 1       | 29     | 57  | 85   | Բ    | Ա    | Է    | Զ    |
| 2       | 30     | 58  | 86   | Գ    | Բ    | Ա    | Է    |
| 3       | 31     | 59  | 87   | Դ    | Գ    | Բ    | Ա    |
| 4       | 32     | 60  | 88   | ԵԶ   | ԳԵ   | ԳԴ   | ԲԳ   |
| 5       | 33     | 61  | 89   | Ե    | Զ    | Ե    | Դ    |
| 6       | 34     | 62  | 90   | Ա    | Է    | Զ    | Ե    |
| 7       | 35     | 63  | 91   | Բ    | Ա    | Է    | Զ    |
| 8       | 36     | 64  | 92   | ԳԴ   | ԲԳ   | ԱԲ   | ԷԱ   |
| 9       | 37     | 65  | 93   | Ե    | Դ    | Գ    | Բ    |
| 10      | 38     | 66  | 94   | Զ    | Ե    | Դ    | Գ    |
| 11      | 39     | 67  | 95   | Է    | Զ    | Ե    | Դ    |
| 12      | 40     | 68  | 96   | ԱԲ   | ԷԱ   | ԶԵ   | ԵԶ   |
| 13      | 41     | 69  | 97   | Գ    | Բ    | Ա    | Է    |
| 14      | 42     | 70  | 98   | Դ    | Գ    | Բ    | Ա    |
| 15      | 43     | 71  | 99   | Ե    | Դ    | Գ    | Բ    |
| 16      | 44     | 72  |      | ԶԵ   | ԵԶ   | ԳԵ   | ԳԴ   |
| 17      | 45     | 73  |      | Ա    | Է    | Զ    | Ե    |
| 18      | 46     | 74  |      | Բ    | Ա    | Է    | Զ    |
| 19      | 47     | 75  |      | Գ    | Բ    | Ա    | Է    |

| Թ. ա. -<br>Համար<br>դ. ա.<br>ընդ. | 1800  | 1900 | 2000 | 2100 |    |
|-----------------------------------|-------|------|------|------|----|
| 20                                | 48 76 | ԳԵ   | ԳԴ   | ԲԳ   | ԱԲ |
| 21                                | 49 77 | Ղ    | Ե    | Դ    | Գ  |
| 22                                | 50 78 | Է    | Զ    | Ե    | Դ  |
| 23                                | 51 79 | Ա    | Է    | Զ    | Ե  |
| 24                                | 52 80 | ԲԳ   | ԱԲ   | ԷԱ   | ՂԵ |
| 25                                | 53 81 | Դ    | Գ    | Բ    | Ա  |
| 26                                | 54 82 | Ե    | Դ    | Գ    | Բ  |
| 27                                | 55 83 | Ղ    | Ե    | Դ    | Գ  |

57. ԲԱՅԱԴՐՈՒԹԻՒՆ.

Նախ դանել թուականն, նորա  
հանդէպը լրացեալ դարի տակն Եօթ-  
ներեակը, Օրին. 1888 թուի հան-  
դէպն, լրացեալ դարի տակն Է ԵՂ-  
Եօթներեակ նահանջ տարւոյն:

58. 4 հարիւր ամեայ Աղիւսակ Եօթ-  
ներեակաց ըստ նոր տօմարին.

| Թ. ա. -<br>Համար<br>դ. ա.<br>ընդ. | 1800     | 1900 | 2000 | 2100 |    |
|-----------------------------------|----------|------|------|------|----|
| 0                                 | 28 56 84 | Ե    | Է    | ԲԱ   | ԳԴ |
| 1                                 | 29 57 85 | Գ    | Ղ    | Է    | Բ  |
| 2                                 | 30 58 86 | Դ    | Ե    | Ղ    | Ա  |
| 3                                 | 31 59 87 | Բ    | Դ    | Ե    | Է  |
| 4                                 | 32 60 88 | ԱԷ   | ԳԲ   | ԴԳ   | ՂԵ |
| 5                                 | 33 61 89 | Ղ    | Ա    | Բ    | Դ  |
| 6                                 | 34 62 90 | Ե    | Է    | Ա    | Գ  |
| 7                                 | 35 63 91 | Դ    | Ղ    | Է    | Բ  |
| 8                                 | 36 64 92 | ԳԲ   | ԵԴ   | ՂԵ   | ԱԷ |
| 9                                 | 37 65 95 | Ա    | Գ    | Գ    | Ղ  |
| 10                                | 38 66 94 | Է    | Բ    | Դ    | Ե  |
| 11                                | 39 67 95 | Ղ    | Ա    | Բ    | Դ  |
| 12                                | 40 68 96 | ԵԴ   | ԷՂ   | ԱԷ   | ԳԲ |
| 13                                | 41 69 97 | Դ    | Ե    | Ղ    | Ա  |
| 14                                | 42 70 98 | Բ    | Դ    | Ե    | Է  |
| 15                                | 43 71 99 | Ա    | Գ    | Դ    | Ղ  |
| 16                                | 44 72    | ԷՂ   | ԲԱ   | ԳԲ   | ԵԴ |
| 17                                | 45 73    | Ե    | Է    | Ա    | Դ  |
| 18                                | 46 74    | Դ    | Ղ    | Է    | Բ  |
| 19                                | 47 75    | Գ    | Ե    | Ղ    | Ա  |

| Թուակա-<br>համար<br>դա-<br>րուց: | 1800 | 1900 | 2000 | 2100 |
|----------------------------------|------|------|------|------|
| 20 48 76                         | ԲԱ   | ԴԳ   | ԵԴ   | ԷԶ   |
| 21 49 77                         | ԷԵ   | ԲԲ   | ԳԳ   | ԵԵ   |
| 22 50 78                         | ԶԶ   | ԱԱ   | ԲԲ   | ԴԴ   |
| 23 50 79                         | ԵԵ   | ԷԷ   | ԱԱ   | ԳԳ   |
| 24 52 80                         | ԴԴ   | ՁԵ   | ԷԶ   | ԲԱ   |
| 25 53 81                         | ԲԲ   | ԴԴ   | ԵԵ   | ԷԷ   |
| 26 54 82                         | ԱԱ   | ԳԳ   | ԴԴ   | ԶԶ   |
| 27 55 83                         | ԷԷ   | ԲԲ   | ԳԳ   | ԵԵ   |

### 59. ԲԱՑԱԳՐՈՒԹԻՒՆ

Նախ գտնել թուակահան՝ նորա հանդէպը լրացեալ դարի տակն Եօթներեակը: Օրին. 1888 թուի հանդէպն լրացեալ դարի տակ է Ա. Է. Թուակահանի սկիզբը դրած ✱ ցոյց է տալիս որ 1800. 1900. 2100 դարապլուհներն նահանջ չեն, իսկ 2000 դարապլուհն նահանջ է:

### ԿՐԿՆԱԿ.

60. Մի ամսոյ ունեցած չորս Եօթներկից (շաբաթից) աւելի օրն Կրկնակ է յաջորդ ամսոյն:

61. Յունվար 31-ից հանել 28 օր (որ է չորս շաբաթ) մնացեալ 3 օրն Կրկնակ է փետրվարին. յաւելացնելով վերան փետրվարի 28-ը (նահանջ տարին 29) կը լինի 31. հանել 28 (որ է չորս շաբաթ) կը մնայ 3 Կրկնակ Մարտի, որ յաւելացնելով Մարտ 31-ի վերայ կը լինի 34. հանել 28ը՝ կը մնայ 6 Կրկնակ Ապրելի. յաւելացնելով Ապրել 30-ի վերայ, կը լինի 36. հանել 35ը (որ է հինգ շաբաթ) մնայ 1 Կրկնակ Մայիսի եւ այլն:

62. Որ եւ իցէ ամսոյ Կրկնակը գտնելու համար պէտք է Յունվար ամսից մինչ նոյն ամիսն օրերը գու-

մարեւել 7-ով բաժանել, մնացեալն  
կրկնակ է որոնածը ամուսն. զոր  
օրինակ. 1888 թուի Յուլիսի կրկնակը  
գտանել, Յունվար 31, Փետ 29,  
Մարտ, 31, Ապր. 30, Մայիս 31,  
Յունիս. 30. Գուլմարն է 182:  $7=26$   
մնացորդ է 0 կրկնակ Յուլիսի:

63. կրկնակը հասարակ տար-  
ւոյ, Յունվար 0, Փետրվար 3, Մարտ  
3, Ապրել 6, Մայիս 1, Յունիս 4,  
Յուլիս 6, Օգոստոս 2, Սեպտեմբեր  
5, Հոկտեմբեր 0, Նոյեմբեր 3,  
Դեկտեմբեր 5:

64. կրկնակը նահանջ տարւոյ՝  
Յունվար 0, Փետրվար 3, Մարտ  
4, Ապրել 0, Մայիս 2, Յունիս 5,  
Յուլիս 0, Օգոստոս 3, Սեպտեմբեր  
6, Հոկտեմբեր 1, Նոյեմբեր 4,  
Դեկտեմբեր 6:

65. կրկնակով գտնվում է ամիս-  
ների քանիտրորդ աւուր ինչ օր լի-  
նելն:

66. Նախ պէտք է իմանալ թէ  
տարին շաբաթուան քանի երրորդ  
օրից է սկսել. կամ Յունվար 1-ին  
ինչ օր էր, օրինակ. 1888 թուի  
Յունվար 1 ը Ուրբաթից է սկսուել,  
որ է շաբաթուն 5-րդ օրն. այս  
թուից պէտք է հանել 1 թիւ. սպա  
աւելացնել որոնածը ամուսն կրկնակն  
եւ ամաթիւն. գուլմարն բաժանել  
7 ուլ, մնացածն եթէ 1 է ի՛2՝ է.  
2 ը՛ Գ՛2, 3 ը՛ Գ՛2, 4 ը՛ Ե՛2, 5 ը՛ Ուր,  
6 ը՛ Շբ. եթէ ոչինչ չաւելանայ, կիւ-  
րակի է: Օրինակ, գտնել թէ 1888  
թուի Ապրել ամսոյ 23-ին ինչ օր է.  
 $23$  (ամաթիւ)  $+ 0$  (նահանջ տարին  
Ապրել ամիսն կրկնակ չունի)  $+ 4$   
(տարեթիւ)  $= 27$ :  $7=3$  մնացորդն է  
6 ուրեմն Ապրել 23 ինչաբաթ օր է.  
Գտնել թէ Մայիսի 25-ին ինչ օր  
է:  $25$  (ամաթիւ)  $+ 2$  (Մայիսի  
կրկնակ)  $+ 4$  (տարեթիւ)  $= 31$ :  $7$   
 $= 4$  մնացորդն է 3 որ է Գ՛2:

ժ.

ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐԻԵԱԿ ԿԱՄ  
ՈՍԿԵԳՒՐՐ.

67. Լուսնի շրջանը՝ որ Արեգակնային 19 տարուամն է կատարվում՝ ասվում է Իննեւտասներեակ. որ բաղկանում է 6939 օրից եւ 18 ժամից ( տարին հաշուելով ըստ Յուլեան տօմարին 365 օր եւ 6 ժամ), եւ Լուսնի մի շրջանը (29 օր 12 ժամ 44 րոպէ 3 վայրկեան). 19 տարուայ ընթացքում պատահելով 235 անգամ, առնէ 6939 օր 16 ժամ 31 րոպ. 45 վայրկեան. տարբերութիւնն է 1 ժամ 28 ր. 15 վայրկեան. Լուսնի ընթացքը պակասելով Արեգական շրջանից:

68. Այս ուղիղ հաշիւն գտած է Աթենացի Մեթոն աստղաբաշխ՝ Քրիստոսից 430 տարի առաջ, որով մին-

չեւ տասն եւ ինն տարի իւրաքանչիւր ամսոյ մէջ Լուսնի ծնունդը եւ լրումն հեշտութեամբ գանելուն համար. Աթենացիք ոսկեղէն տառերով էին նշանակում իւրաքանչիւր տարուայ Իննեւտասներեակն, որ կոչվում էր ասկեգիւր:

69. Այս հաշուով Լուսնի իւրաքանչիւր 19 տարուայ շրջանը լրանալու ժամանակը իւր երեւոյթը մի եւ նոյն կէտումը կունենայ երկրի ընթացքին հետ փոքր ինչ տարբերութիւն, զոր օրինակ եթէ Լուսնի շրջանի առաջին տարուան սկզբումը Լուսնի ծնունդը Յունվարի 1-ին առաւօտեան՝ (ըստ աստղաբաշխից)՝ 9 ժամին լինի, 19 տարուց յետոյ կրկին կը պատահի Յունվարի 1-ին 7 ժամին 31 րոպ. 45 վայրկեանին: (տարբ. 1 ժ. 28 ր. 15 վ.):

70. Այս փոքր տարբերութիւնն որով Լուսնին յետ կը մնայ Արեգա-

կի (Երկրի) ընթացքից, իւրաքանչիւր տարին (19 տարուայ ընթացքում) 4 ըռպ. 32 վարկեան, 312 տարուայ եւ 6 ամսոյ ընթացքում մի օր կազմելով՝ մի քանի դարումը բոլորովին կը սխալէր. որի համար ութերորդ դարումը սահմանեցաւ նոր շրջան լուսնի կամ կարգվերադրաց, որ Իննեւտասներեակի պէս մէկից կսկսի մինչ 19 տարի շարունակելոց յետոյ նորից սկիզբը կը դառնայ:

71. Իննեւտասներեակը գտնելու համար պէտք է փրկչի թուականից հանել 1 թիւ, յետոյ հանել 1881, մնացորդն է Իննեւտասներեակ կամ սոկեգիր. օրինակ. 1888—1=1887, 1881=6 որ է Իննեւտասներեակ: Եթէ մնացորդն 19 էց աւելի է, պէտք է հանել 19 թիւն, մնացորդն է Իննեւտասներեակ:

72. Կամ փրկչի թուականից հանել 1882, մնաց եալն է Ինն-

եւտասներեակ որոնածդ տարւոյն, բայց եթէ մնացածն 19-ից աւելի է պէտք է 19 բաց թողուլ:

73. Նոր ասմարի (Լատինացոց) Իննեւտասներեակը գտնելու համար, պէտք է փրկչի թուականի վերայ յաւելացնել 1 թիւ, ապա հանել 1881 թիւ, իսկ Յունացն գտնելու համար, փրկչուկան թուականի վերայ յաւելացնել 2 թիւ եւ ապա հանել 1881 թիւ ըստ կանոնին (72):

ԺԱ.

ՎԵՐԱԳԻՐ.

74. Լուսնական տարւոյ 12 ամիսների արեգակնային տարւոյ 12 ամիսներից պակաս ունեցած 11 օրը կոչվումէ վերադիր, ըստ սրում լուսնական տարւոյ 354 առեր վերայ 11 օր աւելացնելու է որ հա-

Լատարի արեգականային տարւոյ 365  
աւուր:

75. Լուսնական 19 տարուայ  
շրջանը Արեգականային 19 տարուայ  
209 օր պակաս է, այն է 7 ամսից  
մի օր պակաս, երկուքն զուգընթաց  
անհըու համար այս 209 օրը ամբողջ  
7 ամիս (210 օր) կազմելով եւ  
կարգով իւրաքանչիւր տարւոյ մինչեւ  
19 տարւոյ լրանալն սահմանուած է  
շրջան վերադրաց 19 ասորի ըստ  
իմնեւտասներեակի:

76. Իննեւտասներեակի 18-որդ  
տարւոյ Թ. վերադրի վերայ փոխան  
Ժ.Ա. աւելացնելու Ժ.Բ. աւելացնե-  
լու է որ 19-որդ իննեւտասներեա-  
կին, լինի Ի.Ա. վերադիր, եւ կըր-  
կին իննեւտասներեակի 1 տարին  
վերադիրն լինի Բ. ըստ սղն մըշ-  
տանջենաւոր աղիւսակին:

7. Աղիւսակ վերադրաց Յուլեան տօմարի:

|                 |    |    |    |    |    |    |    |
|-----------------|----|----|----|----|----|----|----|
| Իննեւտասներեակք | 1  | 2  | 3  | 4  | 5  | 6  | 7  |
| վերադիրք        | Բ  | ԺԳ | ԻԳ | Ե  | ՃԶ | ԻԲ | Ը  |
| Իննեւտասներեակք | 8  | 9  | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| վերադիրք        | ՃԹ | Լ  | ԺԱ | ԻԲ | Գ  | ՃԳ | ԻԵ |
| Իննեւտասներեակք | 15 | 16 | 17 | 18 | 19 |    |    |
| վերադիրք        | Զ  | ԺԲ | ԻԸ | Թ  | ԽԱ |    |    |

78. ԲԱՅԱԴՐՈՒԹԻՒՆ.

Նախ գտնել իննեւտասներեակն ապա նոյն խորանի  
մէջ իննեւտասներեակի ներքոյ վերադիրն:



79. Աղիւսակ վերադրաց 1, տարնացւոց 1800 դարու.

|                 |    |    |    |    |    |    |    |
|-----------------|----|----|----|----|----|----|----|
| Իննեւտասներեակք | 1  | 2  | 3  | 4  | 5  | 6  | 7  |
| Վերադիրք        | 0  | ձԱ | ԻԲ | Գ  | յ  | ժԳ | ԻԵ |
| Իննեւտասնեցեակք | 8  | 9  | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| Վերադիրք        | ժԵ | ԻԸ | Թ  | Ի  | Ա  | ժԲ | ԻԳ |
| Իննեւտասներեակք | 15 | 16 | 17 | 18 | 19 |    |    |
| Վերադիրք        | Ի  | Գ  | ժԵ | ԻԶ | Ե  | ժԸ |    |

80. 1, տարնացւոց Իննեւտասներեակի առաջին տարին  
է ոչինչ, երկրորդ տարին ժԱ. 19-որդ տարին ժԸ. Իսկ  
Յուշացն՝ առաջին տարին ժԳ. 19-որդ տարին Բ.

ժԱ.

81. 1, ուսնի ծնունդը դանելու  
Համար պէտք է տարւոյն վերադիրն  
եւ անցած ամիսներ (եթէ Յունվար  
եւ Փետրվար ամսոց մէջն է որոնե-  
լի 1, ուսնի թիւն, պէտք է հաշիւ  
առնել նոյն ամիսներն, իսկ Մարտից  
յետոյ չառնել ներկայն) գումարն  
Հանել 30-ից մնացեալն ցոյց է տա-  
լիս ծննդեան օրն, բայց եթէ գու-  
մարն 30-ից աւելի է, Հանել 60-ից.  
օրինակ՝ 1888 Յունվար, վերա-  
դիրն է 27 ամսաթիւն 1 գումարն  
Ընի 28, Հանելով 30-ից մնայ 2,  
ուրեմն Յունվարի 2-ին է ծնունդ  
1, ուսնի.

27 վերադիր, 2 Փետրվար  
ամսոյ թիւն, գումարն 29, Հանե-  
լով 30-ից մնայ 1, ուրեմն Փետրե-  
վարի 1-ին է ծնունդ 1, ուսնի.

27 Վերադիր, 3 Մարտի ամսաթիւ, գումարն է 30, հանելով 60-ից մնայ 30, ուրեմն Մարտ 30-ին է ծնունդը Լուսնի:

27 Վերադիր, 8 անցեալ ամսոց թիւ (մինչ Սեպտեմբեր), գումարն է 35, հանելով 60-ից մնայ 25, ուրեմն Սեպտեմբերի 25-ին է ծնունդը Լուսնի:

82. Լուսնի Լրումն գտնելու համար, պէտք է տարւոյն Վերադիրն եւ անցեալ ամիսների թիւն գումարել եւ հանել 43-ից, մնացեալ թիւն ցոյց է տալիս թէ նոյն կամ յաջորդ ամսոյ օրն է Լրումն Լուսնի, Օրինակ 1888 Մարտ:

27, Վերադիր 2 ամսոց թիւ, գումարն է 29 հանելով 43-ից մնայ 14 Ապրելի Լրումն Լուսնի:

83, Լուսնի քանիերորդ օրը գտնելու համար պէտք է նոյն ամսոյն օրերն, տարւոյն Վերադիրն եւ

անցեալ ամսոյ թուերն գումարել, հանել 30, մնացեալն է օր Լուսնի, եթէ գումարն 30-ից պակաս է, այն է Լուսնի օրն, Օրինակ. 1888 Յունվար 15+27 (Վերադիր) + 1 (ամսաթիւ) = 49 - 30 = 19-որդ օր Լուսնի:

1888 Նոյեմբեր 20+27 (Վերադիր) + 10 (թիւ անցեալ ամսոց) = 57 - 30 = 27-որդ օր Լուսնի:

Բայց սյս կանոնը միշտ ուղիղ չէ ցոյց տալիս, ժամերն եւ ընդհանրն չհաշուելու համար:

Ճ.Բ.

### ԱՄՍԱՄՈՒՏ:

84, Գտնել տարւոյն Եօթներեակը ազիւսակի մէջ. ապա նոյն կարգում է ամիսներն իւրաքանչիւր ամսոյ:

85. Աղիւտակ ամսամտի.

| Ամիսը   | Եօթներեակք |     |     |     |     |     |     |
|---------|------------|-----|-----|-----|-----|-----|-----|
|         | Ս          | Բ   | Գ   | Դ   | Ե   | Զ   | Է   |
| Յուլ 31 | Բ2         | Դ2  | Դ2  | Կ2  | ՆԼԲ | 2Բ  | ԿԲԲ |
| Փետ 28  | Կ2         | ՆԼԲ | 2Բ  | ԿԲԲ | Բ2  | Դ2  | Դ2  |
| Մարտ 31 | Կ2         | ՆԼԲ | 2Բ  | ԿԲԲ | Բ2  | Դ2  | Դ2  |
| Ապր 30  | ԿԲԲ        | Բ2  | Դ2  | Դ2  | Կ2  | ՆԼԲ | 2Բ  |
| Մայ 31  | Դ2         | Դ2  | Կ2  | ՆԼԲ | 2Բ  | ԿԲԲ | Բ2  |
| Յնս 30  | ՆԼԲ        | 2Բ  | ԿԲԲ | Բ2  | Դ2  | Դ2  | Կ2  |
| Յուլ 31 | ԿԲԲ        | Բ2  | Դ2  | Դ2  | Կ2  | ՆԼԲ | 2Բ  |
| Օգոս 31 | Դ2         | Կ2  | ՆԼԲ | 2Բ  | ԿԲԲ | Բ2  | Դ2  |
| Սեպ 30  | 2Բ         | ԿԲԲ | Բ2  | Դ2  | Դ2  | Կ2  | ՆԼԲ |
| Հոկ 31  | Բ2         | Դ2  | Դ2  | Կ2  | ՆԼԲ | 2Բ  | ԿԲԲ |
| Նոյ 30  | Կ2         | ՆԼԲ | 2Բ  | ԿԲԲ | Բ2  | Դ2  | Դ2  |
| Դեկ 31  | 2Բ         | ԿԲԲ | Բ2  | Դ2  | Դ2  | Կ2  | ՆԼԲ |

86. Նահանջ տարին փետրվար 29 օր է եւ երկու Եօթներեակ ունի, առաջինն գործածվում է ցվերջ փետրվարի, իսկ երկրորդն Մարտ 1-ին ցվերջ Դեկտեմբերի:

ԵՍԵԱՐՈՒՄԸ ԼՈՒՍՆԻ ԵՒ ԱՐԵԳԱԿՈՆ

87. Երբ Լուսինն իւր ընթացքը երկրի շուրջը կատարելու ժամանակ երկրի եւ արեգական ուղղակի ալրամագծօրէն մէջ տեղ գալով արեգակում է Արեգակի Լոյսը երկրի մի մասի վերայ ծագելուց, առումենք թէ Արեգակը խաւարեցաւ, փոխանակ ասելու թէ Լուսնի ստուերն երկրի վերայ ընկնելով չի թողնում որ Արեգակի Լոյսը տեսնենք:

88. Արեգական խաւարման միջոցն անկարելի է որ բոլոր կիսագունդը խաւարի մէջ լինի, որովհետեւ Լուսինն Արեգակից անհամեմատ փոքր լինելով կարող չէ խափանել նորա շառաւիղներն բոլոր երկրի վրայից:

89. Արեգակը խաւարում է լուսնի ծննդեան ժամանակը, երբ Լուսինն

վիշապ համանստերդութեան տտի կամ  
գլխի մտ լինի եւ տրամագծօրէն  
Արեգական ներքոյ գտնուելով իւր  
ստուերն ձգումէ երկրի մի մասի  
վերայ իւտիանսումէ Արեգական լոյսն:

90. Լուսին խաւարումէ երբ  
երկրագունդը մտնումէ Լուսնի եւ  
Արեգական մէջտեղ տրամագծօրէն  
(գէմնուգէմ). Լուսին իւր ընթացքը  
երկրի ներքեւ հասցնելով, երկիր  
իւր շուքը ձգումէ Լուսնի վերայ,  
արգելելով Արեգակի լոյսը Լուսնից,  
այդ ժամանակ Լուսին խաւարեցու  
ենք ստում, փոխանակ տտելու թէ,  
երկրի ստուերը չի թողնում որ Լու-  
սին արեգակից լուսաւորուի:

91. Լուսնի խաւարումն երկու  
տեսակ է՝ ամբողջ եւ մասնաւոր:

92. Բնաւ երբէք Արեգակը չի  
խաւարում Լուսնի լրման ժամանակը,  
եւ ոչ Լուսին՝ լրումից յառաջ կամ  
յետոյ, եւ ոչ իսկ երկուքն իմիասին:

Այս պատահած է միայն Յիսուսի  
խաչելութեան օրն, հակառակ բը-  
նական օրինաց, որի համար Գիոնէ-  
սիոս արիսպագացին Եգիպտոսում  
գտնուելով ոյն ժամանակն եւ տես-  
նելով երկու լուսաւորաց իմիասին  
խաւարումն, ասաց «կամ աշխարհ  
կործանի կամ արարիչ բնութեան  
մեռանի»:

93. Գտնելու համար թէ լուսին  
քանի ժամ է լուսաւորում գիշերը  
եւ քանի ժամ խաւար է գնում  
ցերեկը, պէտքէ հաշուել օրտկան  
51 րոպէ, լոյս ի գիշերի, մնացեալն  
խաւար, օրինակ, ըստ ներքոյ աղե-  
ւակի:

|        |    |     |    |      |      |    |     |    |      |      |
|--------|----|-----|----|------|------|----|-----|----|------|------|
| Ա. օր  | 0  | ժամ | 51 | րոպ. | Լոյս | 23 | ժամ | 9  | րոպ. | խաւ. |
| Բ. օր  | 1  | ժամ | 42 | րոպ. | Լոյս | 22 | ժամ | 18 | րոպ. | խաւ. |
| Գ. օր  | 2  | ժամ | 33 | րոպ. | Լոյս | 21 | ժամ | 27 | րոպ. | խաւ. |
| Դ. օր  | 3  | ժամ | 24 | րոպ. | Լոյս | 20 | ժամ | 36 | րոպ. | խաւ. |
| Ե. օր  | 4  | ժամ | 15 | րոպ. | Լոյս | 19 | ժամ | 45 | րոպ. | խաւ. |
| Զ. օր  | 5  | ժամ | 6  | րոպ. | Լոյս | 18 | ժամ | 54 | րոպ. | խաւ. |
| Է. օր  | 5  | ժամ | 57 | րոպ. | Լոյս | 18 | ժամ | 3  | րոպ. | խաւ. |
| Ը. օր  | 6  | ժամ | 48 | րոպ. | Լոյս | 17 | ժամ | 12 | րոպ. | խաւ. |
| Թ. օր  | 7  | ժամ | 39 | րոպ. | Լոյս | 16 | ժամ | 21 | րոպ. | խաւ. |
| Ժ. օր  | 8  | ժամ | 30 | րոպ. | Լոյս | 15 | ժամ | 30 | րոպ. | խաւ. |
| ՅԱ. օր | 9  | ժամ | 21 | րոպ. | Լոյս | 14 | ժամ | 39 | րոպ. | խաւ. |
| ՅԲ. օր | 10 | ժամ | 12 | րոպ. | Լոյս | 13 | ժամ | 48 | րոպ. | խաւ. |
| ՅԳ. օր | 11 | ժամ | 3  | րոպ. | Լոյս | 12 | ժամ | 57 | րոպ. | խաւ. |
| ԺԲ. օր | 11 | ժամ | 54 | րոպ. | Լոյս | 12 | ժամ | 6  | րոպ. | խաւ. |
| ԺԳ. օր | 12 | ժամ | 45 | րոպ. | խաւ. | 11 | ժամ | 15 | րոպ. | Լոյս |

|        |    |     |    |      |      |    |     |    |      |       |
|--------|----|-----|----|------|------|----|-----|----|------|-------|
| ԺԶ. օր | 13 | ժամ | 36 | րոպ. | խաւ. | 10 | ժամ | 24 | րոպ. | Լոյս. |
| ԺԷ. օր | 14 | ժամ | 27 | րոպ. | խաւ. | 9  | ժամ | 33 | րոպ. | Լոյս. |
| ԺԸ. օր | 15 | ժամ | 18 | րոպ. | խաւ. | 8  | ժամ | 42 | րոպ. | Լոյս. |
| ԺԹ. օր | 16 | ժամ | 9  | րոպ. | խաւ. | 7  | ժամ | 51 | րոպ. | Լոյս. |
| ԻԱ. օր | 17 | ժամ | 00 | րոպ. | խաւ. | 7  | ժամ | 00 | րոպ. | Լոյս. |
| ԻԲ. օր | 18 | ժամ | 51 | րոպ. | խաւ. | 6  | ժամ | 9  | րոպ. | Լոյս. |
| ԻԳ. օր | 19 | ժամ | 42 | րոպ. | խաւ. | 5  | ժամ | 18 | րոպ. | Լոյս. |
| ԻԴ. օր | 20 | ժամ | 33 | րոպ. | խաւ. | 4  | ժամ | 27 | րոպ. | Լոյս. |
| ԻԵ. օր | 21 | ժամ | 24 | րոպ. | խաւ. | 3  | ժամ | 36 | րոպ. | Լոյս. |
| ԻԶ. օր | 22 | ժամ | 15 | րոպ. | խաւ. | 2  | ժամ | 45 | րոպ. | Լոյս. |
| ԻԷ. օր | 22 | ժամ | 6  | րոպ. | խաւ. | 1  | ժամ | 54 | րոպ. | Լոյս. |
| ԻԸ. օր | 23 | ժամ | 57 | րոպ. | խաւ. | 1  | ժամ | 3  | րոպ. | Լոյս. |
| ԻԹ. օր | 24 | ժամ | 48 | րոպ. | խաւ. | 00 |     | 12 | րոպ. | Լոյս. |

Լ.

94. Կենդանակամար, կամ կենդանակերպ կոչուած ասողատունը, 12 մասն է, իւրաքանչիւրն 30 աստիճան: Կենդանակերպերի անուններն են խոյ, Յոււլ, Երկաւոր, Խեցգետին, Աւիւծ, Կոյս, Կշիւ, Կարիճ, Աղեղնաւոր, Այծեղջիւր, Ջըրհոս, Չուկն:

95. Գտնել թէ արեգակը ո՞ր կենդանակերպի մէջ է, Մարտի 21-ից դուստրի մինչեւ որոնած դամբան, տնւր իւրաքանչիւր կենդանակերպերին 30, 30, սկսած Խոյից, ուր դադարի, այն կենդանակերպի մէջ է Արեգակն: Օրինակ գտնել թէ Յուլիս 20-ին Արեգակը ո՞ր կենդանակերպի մէջ է, 10 (Մարտից) + 30 (Ապրել) + 31 (Մայիս) + 30 (Յունիս) + 20 (Յուլիս) = 121, 30 = 4-որդ կենդանակերպ լրացած 5-որդ կենդանակերպի (Աւիւծի) 1 աստիճանի մէջ է:

## ԳԻՐ ՏԱՐԻՈՅ.

96. Շարժական տօների եւ միջոցների ցոյց տուողն է Տարեգիրն:

97. Որովհետեւ ըստ Յուլեան տօմարի Չատիկը կատարվում է Մարտ 21-ից ց 25 Ապրելի, շարժական միջոցն է 35 օր, այս շարժական միջոցի համար սահմանուած են 35 դրեր, Ա-ից մինչ ֆ. (ֆ. տառն միշտ ֆ. տառի հետ է դործածվում նահանջ տարին մինչ ֆետրվարի վերջը):

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8.  
Ա. Բ. Գ. Դ. Ե. Չ. Է. Ը.  
9. 10. 11. 12. 13. 14. 15. 16.  
Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Ն.  
17. 18. 19. 20. 21. 22. 23. 24.  
Չ. Ղ. Ճ. Մ. Յ. Ծ. Շ. Ո.  
25. 26. 27. 28. 29. 30. 31. 32.  
Չ. Պ. Ջ. Ռ. Ս. Վ. Տ. Ր.  
33. 34. 35. 36.  
Ց. Ի. ֆ. ֆ.

98. Երբ որ այս գրեթեց մին սահմանվումէ մի տարւոյ համար, ցոյց է տալիս թէ այն տարին Չատիկ Մարտի 21-ից քանի օր յետոյ պէտք է կատարուի, օրինակ. Ա. տարեգիր եղած տարին Մարտ 22-ին է լինում Չատիկ, Բը 23-ին Գը 24-ին, մինչ ծ. տարեգիրն Մարտի մէջ է պատահում, իսկ Ի. տարեգրեց մինչ Փ. տարեգիրն Ս.պրեւի մէջ, Փ. (Տարեգիրն Ս.պրեւ 25-ին):

99. Հասարակ տարին մի տարեգիր ունի, իսկ նահանջ տարին երկու տարեգիր, մին գործածվումէ ցվերջ փետրվարի, միւսն Մարտի 1-ից ցվերջ Գեղտեմբերի:

100. Որովհետեւ նահանջ տարին փետրվար ամիսը մի օր աւելանումէ, այն պատճառաւ այբ բնի կարգի յետադաս գիրն յառաջ է դրվում նախագաս գրեց, այսինքն եթէ նահանջ տարին լինի տարեգիրն Ա.

եւ Բ. Բ.ը. յառաջ կը դրուի Ա.-ից:

